


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ՍՐՏԱՍՆՄԱՆ
Երկու քիւ միկ ծրարով
Տարեկան . . 14 ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ՍՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 ծրար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրարներուն տոկոսը
20 ամսովով



Լ Ր Ա Պ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄՆՆ ԶՈՐԵՑՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՅԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Ирвунк“

ВАРНА

Գրութիւնք եւս
լին տրոշիր

ՏՕՔԹ. Վ. Ա. ԳՈՒՅԻՍՏՃԵԱՆ

Փոխադրուած է Սփլիթ քաղաքի եկե.
ղեցւոյ ղեկավար Բլոյատա Սրբոյնի թիւ 1
ուր կրնաւ ինքնապէս ամեն օր 10-12
2-3, իսկ ինքնապէս օրեր 10-12, 1-3.
Գույնը մնալուն ընտանիքը պոչոտնա-
կան այցելութիւն կրնաւ ինքնապէս
ինքնապէս օրեր 2-էն վերջը :

Ս Օ Ֆ Ի Ա

ՎԵՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԳԻՄՈՒՄԸ ԶԱՐԻՆ

—

Կաթոլիկ եկեղեցւոյ պատկան կալուա-
ծոց ղեկավարն է Վ. Ա. Գույնիստճեան.
Անի Ռոմիոյ կայսեր ղեկավար խնդրա-
պրին թարգմանութիւնը հետեւեալն է.

Ամենայն Հայոց Կաթոլիկոսին
խոնարհ խնդրապրին առ նորին
կայսերական Վեհափառութիւնը

Թիւ 1 տար ինձ, Վեհափառ
Տէր, սիրտս բանալ Ձեր Վեհա-
փառութեան առջեւ աշտայայ-
տելու համար զիս կեղեքող սա-
տիկ վիշտը, զոր կը յուսայի ան-
ձամբ գալ յայտնել յոյս Ձեր
փառաւոր գահայից : Հակառակ
Տէր ամենայն աւելցիլիս, աչք ա-
ռած էի հեռաւոր ճամբորդու-
թիւն մը, յառաջիկայ թողաւորու-
թիւնն ունենալ ներկայանալ
Ձեր Վեհափառութեան օգոստոս-
փառ անձին, բայց, առաջ, ին-
ծի դէմ փակ դատալ այդ գահին
ճամբան, որ մատչելի է ամէն
ուրիշի :

Ներքին գործերու պ. նախա-
րարին պաշտօնական մի նախա-
կէն կը տեղականամ որ Ձեր Վե-
հափառութիւնը բարեհաճեր է
ուշադրութիւն դարձունել իմ
գործերու կերպիս, որ Անոր Ե-
րեւցած է իբր ըմբոստութեան
նշան մը հանգէպ գերագոյն իշ-
խանութեան հրամաններուն :

Ո՛չ, Վեհափառ Տէր, Ձարին
արդարադատութիւնը նուիրական
է ինձ համար, և անիկայ ոչ իմ
գործերու կերպիս կապակցելի ներ-
կայացուցած է իմ ամենապար-
մաճ Վեհապետիս, ծանր պա-
տասխանատուութեան մը եւն :

Թարակած է իր խղճեալները :
Հաճեցէք, Վեհափառ Տէր, հրա-
ման տալ ինձ, որպէսզի առանց
բան մը ծածկելու, յայտնեմ ձեզ
պարզ ճշմարտութիւնը և զայն
եկեղեցւոյ Ձեր Վեհափառու-
թեան արդար դատաստանին :

Հպատակութիւն և հնազանդու-
թիւն դէպի Մեր Փրկչին վար-
դապետութիւնը յատկանշելուն
եղած են միշտ Ամենայն Հայոց
Կաթոլիկոսին, անեալ Ս. Գրոյ
ողովը, որ այս հնազանդու-
թիւնը կուսուցանէ դէպի այս աշ-
խարհի հզօրները, միշտ գործադ-
րած եմ և կը գործադրեմ խղճի
մտք այս պատուէրը : Իմ օժու-
միս հանդիսաւոր օրը, հրաւեր
եղաւ ինձ երգմամբ խոստանալ
էջմիածնի տաճարի խորանին
հանգէպ, Խաչը և Աւետարանը
համբարեւոյ, հաւատարմութիւն
և հնազանդութիւն դէպի կայսրն :
Միւսայն օրը, նմանապէս երգ-
մամբ, խոստացայ հաւատարմութիւն
պահպանել ըլլալ կարգ ու կա-
նոնին մեր դարերէ ի վեր նուր-
բագործեալ եկեղեցւոյն, անոր
և իր պատրիարքին իրաւունք-
ներուն : Այս խոստումով ես ոչ
թէ բացարձակ տէրը ըլլամ ե-
կեղեցւոյ, կարող զայն զրկելու
իւր կալուածները տնտեսելու ի-
րաւունքէն, այլ պարզ պահա-
պան մը այն կալուածոց, որոց
տէրը համարէն Հայկական եկե-
ղեցին է :

Ամենայն երկխառնութեամբ
Խաչին և Աւետարանին հանգէպ
երգունքնալէ ետքը, կրնամ,
Վեհափառ Տէր, երգմանալն
ըլլալ, և այդպիսի պատասխա-
նատուութիւն մը առնուլ վրաս
առաջի երկինց, առաջի եկեղեց-
ւոյ և ահա ինչ հայ ժողովրդեան :

Յաւիտեական անէք մը պի-
տի ծանրանար վրաս, գերեզ-
ման նշովից առաքելայ պիտի
ըլլալ և անունս ամենաանարգ
անուններու կարգը պիտի դա-
տէր : Ո՛չ, ես որ արդէն ճա-
րու ծայրը հասած եմ, և յա-
ւիտեականութեան սեմին վրայ
կը կախեմ, անկաշիւի է որ
երգմանալն ըլլամ :

Ահա ասոր համար է որ, Վե-
հափառ Տէր, ձեզ կենթարկեմ
այն խոնարհ խնդրագիրս, ներ-
շնչեալ Գեթսեմանի պարտե-
զին մէջ աղօթող Յիսուսի պատ-
կերէն : Նորա ձայնն է որ կը
լսուի միաժամանակ այս տաճա-
րին դռներէն, թող այս բաժակը
հեռացուի Հայկական եկեղեցիէն :

Պատմութիւնը մեզ կը ցուցնէ
որ այս եկեղեցին դարերու ըն-
թացքին մէջ ամէն տեսակ նե-
ղութիւններ և հալածանքներ
կրեց իր անկախութիւնը պա-
հելու համար : Ձեր Վեհափառու-
թեան հանգուցեալ նախնիք ի-
րենց օգոստափառ բարեացակա-
մութեան միշտ արժանի սեպե-
ցին Հայկական ժողովուրդը, իսկ
ասոր փոխարէն սոյն ժողովուր-
դին ծոցէն ելան բազմաթիւ դա-
ւակներ, որ ճակատամարտի դաշ-
տին մէջ իրենց ցոյց տաւ թա-
շագործութեամբ, աւելցուցին
ուսմական փառաւոր բանակին
զինուոր փայլը :

Հայկական եկեղեցին միշտ
վայելից բարձր հովանաւորու-
թիւնը ձեր օգոստափառ նախ-
նիքներուն, որ իրենց գահին
բարձրէն կը ճանչնային ան-
ձեռնմխելի իրաւունքները այս
Առաքելական եկեղեցւոյն, որ
կը պատրաստուէր այս տարի
տօնելու 1600 երորդ տարեդարձը
էջմիածնի եկեղեցւոյն հիմնադ-
րութեան, մայր Հայկական ա-
մեն եկեղեցիներուն :

Յունիս 12 ի օրէնքը կը խախ-
տէ իմ եկեղեցւոյս դարաւոր հի-
մարը : հետեւեալը, իբր նորա
պետը, պատասխանատու Աստու-
ծոյ առջեւ և չորս միլիոն ան-
հատներէ բաղկացեալ ժողովուր-
դի մը առջեւ, որ զիս այս եկե-
ղեցւոյն պահապան ընտրեց, չեմ
կրնար, Վեհափառ Տէր, առանց
խօսք մը ըսելու ընդունիլ այս
ծանրաշիւ օրէնքը, որ վճռուե-
ցաւ առանց իմ կարծիքս առ-
նուելու :

Աղաչած էի ներքին գործոց
պ. նախարարին ոչ յետաձգէ
նոր վճիռին գործադրութիւնը,
և Ձեր Վեհափառութեան ուղ-
ղած էի խոնարհ խնդրագիրս,

որով կաշաշի Անոր հաճիլ մտիկ
ընել ինձ, ինձ զոր իրերու նոր
կարգը անհանգուրծելի կա-
ցութեան մը մէջ կը դնէ :
Միակ գիտաւորութիւնս էր հա-
ւատարմաբար կատարել իմ հով-
նական պաշտօնս, որ ներկայ
պարագայից մէջ, կը կայանար
Ձեր Վեհափառութեան ներկա-
յացունել իմ նկատողութիւններս
նոր օրէնքի մասին :

Յաւելով կատարեմ որ իմ այս
գիտաւորութեանս սխալ մեկնու-
թիւն տրուեց է : Հաւատացէք
Վեհափառ Տէր, որ խորանին
խոնարհ պաշտօնեան, արդէն
իսկ դերեղմանին եղբը հասած :
չպիտի զիջանէր իր մտածումնե-
րը կեղծել և թէ ամենայն ան-
կեղծութեամբ է որ ձեզ կըսէ :
Երբէք ոչ ինքը, ոչ իր կեղծը,
ոչ իր ժողովուրդը մտքերէն
չանցուցին Ձեզ անհնազանդ դա-
տարի, ձեզ, Տէր, օժելոյդ :
Գալով այս վերջին օրերու ժո-
ղովրդային խռովութեանց, որոց
լուրը հաւանականաբար մինչեւ
Ձեր գահին հասած է, անոնք
բան մը միայն կապալուցանին
թէ ինչ աստիճան անակնկալ էր
այս նոր օրէնքը, որ կը ներկա-
յանայ իբր ծանր պատիժ մը
և թէ ինչ աստիճան կը հակառէ
այն եկեղեցւոյ ողովն :

Վեհափառ Տէր, աշխարհիս
այլ և այլ երկիրներու պատկա-
նալ եմ ամբողջ հօտիս հետ միա-
տեղ է որ Ձեզ կը դիմեմ իմ
խոնարհ խնդրագրովս : Թող
այս բաժակը անցնի իմ եկեղե-
ցիէն, և թող Ձեր անհուն ողոր-
մածութեան ճառագայթները
ուրախութեամբ և անկեղծ երախ-
տագիտութեամբ լեցունեն իմ
ժողովուրդիս սիրտերը :

Երբ աղերսագիրս լինցաւ, իմ
բոլոր եղբայրներու հետ միա-
տեղ մտայ մայր աթոռոյս տա-
ճարը : հոն սուրբ խորանին վրայ
գրի այս աղերսագիրը և եռանդ-
եամբ աղօթեցի մեր Տիրոջ, որ-
պէսզի Ձեր Վեհափառութեան
օրերը երկարէ, և Ձեր օգոստա-
փառ գերդաստանին վրայ տա-
րածէ իր և իր Աստուածորդոյն
օրհնութիւնը :

Միշտ աղօթելով Ձեր Վե-
հափառութեան առողջութեան և
կենաց համար

Մնամ վշտագին
ՄկրՏԻՉ

Կաթոլիկոս Ամենայն Հայոց
12 Սեպտ. 1903

ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ

Ազնուաշուք

Տէր Աստուածայեալ եւ Տեալք Անդամք
Ազգ. Պատ. Թաղ. Խորհրդոյ

Ի

Ինչպէս յայտնի է, Պուլիպիոյ Հա-
յոց Աստուածայեալ եւ Տեալք Անդամք
անցեալ տարւոյ հոկտ. 23ին Սօֆիա
գումարում Պատգամաւորաց Պատկ.
Ժողովը միեւնոյն ատեն նշանակած
էր նաեւ նախագահութեան պաշտո-
նով Սօֆիապետի եօթը անձերէ բաղ-
կացեալ մասնախումբ մը, որոց գլ-
ժի ձեռնարկութիւնը յա ձեռնած էր
Գեորգ. Վահան Մ. Վարդապետի անօրի-
նութեան և Արք. Գրիգորի. Հայր Սուրբ
Պատ. Պատգամաւորներու հապճեպ
մեկնումէն յետոյ մերժեց ճանձնաւ սոյն
Յանձնաժողովը եւ գործակցիլ նմա :
Իր Սօֆիապետի մեկնումէն յետոյ միայն
նոր Մասնախումբ մը կազմած լինե-
լուն լուրը տարածուեցաւ :

Սոյն ժամանակ նորընտիր Աստուածայեալ
Սրբապետն հասած հարցական նամակի
մը տեղւոյն քահանայ պատառնանելով
կը տեղեկագրէ եղբայրներուն եւ հրա-
հանք կը խնդրէ կրկին Մասնախումբ-
ները միացնելով գործելու համար : Այլ
սակայն՝ Նորին Սրբապետութիւնը պաշ-
տամարաց Ժողովին անուանածը մի-
այն ժողովուրդային կնիք կրող եւ օրի-
նական զանկումով անցեալ դեկ. 30 թո-
ւակիր մի լարգելի պաշտօնագրով վճ-
ռաբար յանձնարարած է Տէր Թովհան
Մանգալուին հօր, իր անժամանակ
նախագահութեան ներքեւ գումարն-
լով նախկին յանձնարարութիւն Սնդակները
գործի ձեռնարկելու առանց յապաղման
եւ վարանման : Միեւնոյն ատեն հա-
ղորդելով միացումայն թէ անցագրի
խնդիրը պատրիարքարանի միջոցաւ կար
գաղութներու պէս, պատրաստ պիտի
լինի ձախկն կնիքով :

Այսպիսով ժամանակաւորութեան
յանձնարարութեան յիշեալ Տէր Հօր նա-
խագահութեան տակ, տարեգլխի օրը,
գումարուելով եւ գիւնարը կազմելով
որոշեց զորոքի ձեռնարկել :

Հետեւեալ կարենալու համար յան-
կարծազգայ պարագային իսկ մեր ար-
ժանաբանը Սրբապետ Աստուածայեալին
արժանաւորելու եւ Պուլիպիոյ Հայ
Ժողովուրդին պատուարներ ընդունե-
լու թիւն մը, նաեւ նախագահութեան
տական զանազան պէտքերու ծախքը
հաթաթելով ըզմեծ կը դիմենք պատ.
Խորհրդի վտարման հոգաւորութեան
բարեհաճիլ գրառ հասցնել մեզ : Այ-
սինքն Տեղւոյն Ազգ. Ժողովուրդին
անուամբ ստորագրուած առաջնորդա-
կան ծախքը գումարին առաջին կողմ
նկայն և կաւալ նորոգութեան խնդրին
Ձեր լուրջ նկատողութեան կը յանձ-
նենք միանգամայն թէ, յարմար ա-
սանին դիմելով զանազանութեան Հայր-
հիւ պուլի. բարեխնամ կառավարու-
թեան ալ այս տարի սոյն նպատակաւ
նպաստ ընդունելու յոյսը կոյսուած
լինելով, Սրբապետ Աստուածայեալին հը-
նարաւոր խնայողութեան առջեւ խո-
նարհելու վիճանին պատրաստակաւ
թիւն հանգիստ, հայ աշխիւ Ժողովուր-
դին կը մնայ հաստատել իր արժանա-
պատուութեան ճանաչումը, որոյ
ապացոյցները քաղցր տուած է,
չինչայնով երբէք իր լուծման, աղքա-
տութեան ձեռնարկութեանց համար :

Արք. Վատան Ձեր վտարման հոգաւոր-
ութեան պատուարներ արգիւքին, միամեծ
խորին յարգանքս հաւատարմութեամբ :

Ի գիւնար Յանձնախումբի

Նախագահ

ՅՈՒՆ ԲԵՆՅԱՄ. ՄԱ. ԴԻԿ ԻՆԻ

Աստուածայեալ Աստուածայեալ
ԿԱՐԱՊԵՏ ԽՈՒՄԵՆԱՆ Ս. ՔԻՆՅԻՔԵԱՆ

Գանձապետ

Ս. Կ. ՍՈՒՔԻՍԵԱՆ

Դրամը դրկել Գանձապետի հասցէին

Սօֆիա. 2 Յունուար 1904

ԲԱՆՍԻՍՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

— 3 —

Հինգշաբթի, ամսոյ 8 ին, ե-
րեկոյան ժամը 8 1/2 ին Սա-
տիւնէնի սրահին մէջ պիտի բա-
նախօսէ Հինգշաբթի կուսակցու-
թեան ներկայացուցիչ Պ. Հա-
հա—կահապ, նիւթ ունեւոր-
ւով «Հինգշաբթի կուսակցութեան
գիւրքը Հայ Յեղափոխութեան
մէջ» :

Վառնա 8 Յունուար 1903

ՄԱՍՆԱՌՈՒՄԸ

ԲԱՅՆԱՄԱԿ

ԵՌ ՊՐԵ. ՀՐԱՆԱՅ ԿԻՄԱՐ.

Ներկայացուցիչ Հիւն Հինգիւրդի

Իմացած ըլլալով որ՝ զուր Զին
Հինգշաբթի կուսակցութեան
հոս Պուլիպիոյ մէջ, յարմար առիթ
կը համարինք Ձեզ հրապարակաւ
կրկ ելու աշխատանքները, զորս
մենք Վատանայի Հայ հասարակութիւնը,
ուղղած ենք՝ 500 է աւելի ստորագ-
րութեամբ հանրագրութիւնով, եւ այն
պարտաւարով զոր քաղաքիս ամբողջ
Հայութիւնը առանց կուսակցական
խարտութեան, եկեղեցւոյ չըջափակին
մէջ հաւաքուելով, միաձայն հաւա-
նութեամբ պատրաստած ու Ձեր կենտ-
րոնին դրկած էր :

Այդ հարցումները՝ որոնց ցարդ պա-
տարանք չէ ստացուած, ահա հետեւ-
եալներն են .

1) Ինչո՞ւ Եանէնը եւ Ձեզեանը
սպաննել տուած էք : Այդ ապացոյց-
ուած ոճիւրները արդարացիօր ինչ
փաստ ունիք : Գիտցէ՛ք թէ՛ ուր-
ցուած ու եւ փորձ, կամ բացատրու-
թիւն տալէ փախուտ, Ձեր իսկ դա-
տարարութիւնը կը մնայ :

2) Ինչ խնդիր կը կրէք զուր որ,
գումարեցիք ու քանդուելուն պատճառ

եղաք կազմուած Միութեան, եւ այսօր
հեր ընկերակալանք քողի տակ իբր
հայ յեղափոխական ինքզինքնիդ կը
ներկայացնէք Հայ Ժողովուրդին, եւ
կուզէք զրգուել զանոնք որպէս
միասնաբար ձեր պոռոտախօսութեանց
անստիւյլ, մինչեւ իսկ Ռուսոյ կայս-
րութեան դէմ կռուելու յանգիւղ-
թիւնը ունենայ : Առանց մտածելու
որ անոնք մեր սիրեցեալ Հայրենիքը՝
Տաւրիսիայի մասը՝ ամբողջ հայութեան
անմիջական եւ միացեալ ուժերուն կը
կարօտի, փրկուելու համար այն սոս-
կալի կացութիւնէն, զոր ստեղծած է
թուրք բռնակալ կառավարութիւնը
Հայ տարրը ընաջինջ ընկելու ծրագրով
3) Պատասխանեցէ՛ք թէ՛ ամբողջ Հա-
յութեան ուժը՝ փոխանակ թուրքին
դէմ համախմբուած որ արդէն մեզմէ
չատ ուժեղ է, ինչ հաւանութեամբ
Ռուսոյ դէմ ալ ձեր օրկաններով պա-
տարաւոր կը հարապարակէք Հայ Ժողո-
վուրդին անուամբ :

Այս հարցումներուն եթէ կանխաւ
եւ կարգաւ չը պատասխանէք, եւ
Ձեր առաջախօսութեանց մէջ, ինչպէս
ուրիշ մի քանի քաղաքներ ըրած էք,
ապրէն ձորէն խօսելով՝ Ժողովուրդը
խարկ փորձէք, փաստս եղէք թէ՛
արդէն Ձեր կենտրոնի ճակատը դուռ
մուտ «Եղբայրասպան» մակերէն
զատ «Աղքատասպան» մակերէն այ պիտի
խարանդի, եւ զուր Զերկաններուն
հետ, գիտակցի Հայ Ժողովուրդին մէջ
երբէք տեղ չպիտի ունենայ :

Ձեզ Հայութեան կողմէ

ՊԱՆՍԻՍՈՒԹԻՒՆ ԹԱՆՔԱՆԵՐՈՒՄԸ

8 Յունուար 1903

ՎԱՍԻՆԱ

ՎԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԵՆ ՍԼ

Պատ. Խորհրդի

«Իրաւունք» լրագրոյ

Ներկայիս կուսած հասարակ պ.
Պատան Գալիպոլիս ըրած այն խօս-
քերը թէ՛ երբ օր մը խանութիս առ-
ջեւ կիցած տառնին կը խօսէինք նա
սա խօսքերը ըսաւ «ո՛վ որ Վերակազմ-
եալ է, եւ Ռուսիա ոտք կը կոխէ ա-
մենքն ալ կըստանա՞նք» : Եթէ պարսնը
պիտի կրնայ ուրանալ լսածը, ինչպէս
Ժողովը մը մէջ ներկայիս առջեւ
անստիւյր օրացիւր է եւ պատ-
րաստ եմ օրինական երգումով հաստա-
տել դատարարին ներկայութեան :

Ա. Չարպախեան

9 Յունուար 1904

ՄԻՈՒԹԵԱՆ
ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ի.

Իսկ Համարածու Արդումանեանց՝ «Մեք նա-
ղարէկի հետ գործ չունենք» ըսելն, ստորադրե-
լէն վերջ է դրած եւ օրը կը շարունակէ
Հինգ. մասնաձեւերու դրամները կուզէ յատկացնել
պրօքիւրի մը, որուն հրատարակութեան մասին ո՛ր
եւ է աշակցութիւն բացարձակապէս մերժուած է
կեղք. վարչութեան կողմէն՝ իբր գրգռիչ գրութիւն
մը, որ 1896 թ. դէպքերն այնքան խեղաթիւրուած
են, դէպքեր, որոնց վերջուածը կրնա՞ր դրածեալ
մարած, թաղուած կրկնել արժանի գոյց :

Եւ ոչ միայն այդ պրօքիւրին հրատարակու-
թեան համար Հինգշաբթիներու կը գիմէ, այլ եւ
գաղանի կը գրգռէ ընկերները, որպէսզի հանրագրու-
թիւն պատրաստեն եւ Աւետիս Նաղարէկեանի աշ-
խատակցութիւնը պահանջեն :

Ահա թէ ինչ կը գրէ պր. Համարածու՝ Ար-
դումանեանց իր ծանօթ դաւադրական նամակին մէջ.
«Միւրի ընկերներ, աշխատեցէ՛ք տեղւոյդ
«գլխաւորապէս վերակազմեալ ընկերներին հետ միա-
«սին կամ աւելի լաւ է ուղակի նշանց կողմը,
«մի ընկերական հանրագրով պահանջ ներկայացուի
«կենդանին. այդ մասին ուրիշ տեղեր էլ եմ գրել» :

«Իր պահանջները զրոյց կգտն հարցը լաւ ընկալք
«կուսայ. . . »

Մեզմէ գաղանի եւ հակառակ տրուած որոշում.
ներուն, Հինգշաբթի գրածով սպառնալ տուին վեր-
ջագէս Աւետիս Նաղարէկեանի պրօքիւրը, որուն
սպառնալու մէջ օրինակը մեր մօտ կը մնայ եւ
զոր սակայն չհամարձակեցան ցրուել, քանի որ
ի միջի այլոց՝ այդ պրօքիւրին չուրջը իրենց լարա-
խաղացութեան մանրամասնութիւններն ալ յայտ-
նուեցան այսպէս :

Առանց այլ եւս մեր կողմէն բառ մը, խորհը-
ղանութիւն մը աւելցնել պէտք տեսնելու, հոս կը
դնենք նոյնութեամբ պ. Համարածուի մէջ նամակը,
զոր՝ հատուածական հախիւներով ուղղած է միայն
Հինգ. Հինգշաբթիներու, եւ ուր որոշ կը տեսնուի իր
եւ իր ընկերներու հոգին :

«Միւրի ընկերներ :

«Այնպիսով սպասում էի նամակիս պատաս-
խանին : Եւ չեմ խմանում նամակս չէ՞ք ստացել .
իսկ թէ որ ստացել էք, հապա ինչ է պատահել որ
չէք ուղում պատասխանել : Մինչդեռ՝ ինչպէս նա-
մակիս պատահականութիւնից, ձեզ ուղղուած առա-
ջարկին հասկանալի էք, եթէ հաւատում էք ինձ՝ որ-
պէս անկեղծ ընկեր միւս կողմից եւ կառուած չու-
նիմ որ զուր սիրում էք Աւետիս եւ նախանձախնդիր
էք նորա պատուին այնքան որքան եւս, պէտք էր
պատասխանած լինէիք մինչեւ հիմա, ձեր չու-
թիւնը աւելի քան տարօրինակ եւ զարմանալի է,
կրկնում եմ, եթէ ստացուած է նամակս : Ինչ եւ
լից. առաջին նամակով ձեզ գրել եմ. Աւետիսը
պատասխանել է Հ. Առաքելեան մարդին ետպատիկ

քառասունի բրօքիւրով եւ այդ բրօքիւրի ձեռագիրը
ուղարկել էր կենտրոն, ըստ իրենց աստիճանի
կարգաւորեց յետոյ հրատարակելու համար կենտրոնի
սպարաւորութեամբ. կենտրոնի սպարաւոր հատարակելու
մտքին ստատիկ հակառակել էր պր. Հ. Խոսրով-
եանը, ո՛վ գրէ ինչ յետոյ մտքերով մերժեց կող-
մից մէկի հակառակութիւնը էլ հասկանալի է թէ
ինչ հետեւանք կուենաւ . . . եւ ուստի «Հինգշաբթի»
սպարաւորութեամբ հրատարակելու խորհուրդը ջուրն է
ընկնում :

«Աւետիսը փող չունէր, իսկ բրօքիւրի հրատարա-
կութիւնը յետաձգել անկարելի էր, քանի որ ա-
ռանց այդ էլ շատ էր ուղացել : Եթէ ինքը միջոց
ունենար ոչ մի տեղ չէր գիմել, կը հրատարակէր
եւ «Նաղարէկ թղթիւն» վաղուց քաղաքիս կը
լինէր : Ինչ պէտք էր անել : Սպասելով Աւետիսը
հօ չէր հարստանալու եւ առանց դրամի՝ ընկերներին
եւ Աւետիսին յարգողներին կողմից օգնութիւն հա-
նելու չէր հրատարակուի :

«Պր. Ս. Սաղունին, Աւետիսի ամենալաւ բարե-
կամը, սրտանց փափաքում էր հրատարակուած
տեքստը այդ բրօքիւրը : Նա առանց երկար մտածելու,
ձեռագիրը ուղարկեց Աւետիսին եւ գրեց որ անմի-
ջապէս յանձնէ սպառնալութեան, առ քաղաքիս յանձն
առնելով սկզբնական ծախքերը, մինչեւ մնացածի
համար գիմէ կոչկառ ընկերներին, մինչեւ սպառ-
ութեան ամբողջականը : Եւ էլ իմ կողմից յանձն
առալ գիմել ձեզ : Ինչպէս արդէն գիտէք իմ նախ-
կին նամակից :

(Ճաշուհակելի)

ՄՐԱՅԻՆ ՄԷՋ

Հինգշաբթի օր վերի յայտարարութիւնը եւ ըստ նամակաւ քաղաքի ամէն կողմը ցրուած ըլլալով, որոշեալ ժամէն մէկ ժամ առաջ Ստեփանէնիէ սրահին մէկ կողմը գրաւուած էր գաշնակցականներու խումբով մը, եւ դրան կողմը 10-12 Հին Հնչակեան զորամասերով, իսկ ժամը 8 ու կէսը միջոցին հետգհեաէ հաւաքուեցան չէզոք, Միութեանական եւ Վերակազմեալ Հին Հնչակեան ազգայիններէ բաւական հետաք թիւերը, Այս սրահին կէտէն աւելի մասը լեցուած էր, հակառակ օգին աննպաստ ըլլալուն:

Հրաւէր կարգացող Յանձնախումբի կողմէ նախ Հին Հնչակեան մը եւ Դաշնակցական մը բնակը երևցան, եւ կանխամատուած ձեւով մը արդէն ատենապետ սրահը վարչութեան կանչուեցաւ այդ գաշնակցականին կողմէ. այս երևեցաւ թէ փախուկի մը արդարութիւնը ձգող այդ պարտին ձեւերը եւ այս ամիս փոխանակուած խօսքերը պատշաճութենէ աւելի իրարու «ուշաքամ» ընելու համար կանխապատրաստուած կապկուրիներէն:

Վարչութեան զգացած էր իր գերբին փափկութիւնը վառնալի այն ժողովուրդին առջեւ որուն կողմէ ամիսներ առաջ իր իսկ ստորագրութեամբը պարտաւարկը զրկուած էր իրը ոճրագործի այն Հնչակ. կեդրոնին, զոր այդ ժամանակը կը ներկայացնէր պ. Հրահատ կամար:

Վերջապէս այս վերջինը բեմ հրաւիրուեցաւ իր բանախօսութիւնը ընելու համար, Բանախօսը Հնչակեան յիշ փոխ. կուսակցութեան ծագումնական լիւր, իսկ կարգաւ Պոլսոյ Գումար-Պարուի եւ Պապը Ալիի ցոյցերը, Սասնոյ չարմուծը, որոնց հետեւեալ ցոյց տուաւ 1895ի Մայիսի բարենորոգմանց ծրագիրը, եւ Զէյթունի փառապանքը ապստամբութիւնը պարծանքով յիշելով շնչանց անոր հայ ազգին հասարակական վերակազմութիւնը, Ատենախօսը Հնչակեան այդ բուն գործունէութեան չըջանք բերաւ փակեց 1896-ի ծանօթ պատակաստմով, որուն պատճառ ցոյց տուաւ կարգ մը հակադեմոկրատիաները (7), չը հաճելով խոստովանել թէ իր ակնարկած վերակազմ. Հնչակ. հաստեմբի գործը ինչն էին որ, քիչ բացառութեամբ, կաղանկեղանք էին Պոլսոյ ցոյցերը եւ Զէյթունի ապստամբութիւնը: Եւրկայ եղող վերակազմեալ անդամները, պէտք է ըսել թէ, գովելի կարգապահութիւն մը ցոյց տուին ատենախօսին ըրած հաստեմբական ոգիով այդ անձնիչ արտայայտութիւնը պաղարկեալութեամբ լսելով:

Ատենախօսը Հին Հնչակեան այժմէականութեան վրայ խօսելով, յայտարար ց թէ իրենք ալ չատ գլխածուած են վերջին եղբայրասպանութեան զէպրներէն, եւ որոշած են անկէ անդին ամէն ճիգ թափել եղբայրասպանութիւնը չը կրկնուելու համար, եւ աւելցուց թէ միայն իրենց ուշաք-րութիւնը պիտի դարձնեն երկրի գործունէութեան, միեւնոյն ատեն շարունակելով ընկերակցական բարոյականութիւնը եւ արտասահմանի բանուորական եւ այլ դասակարգութեան մէջ, հարասարապէս կուր մղելու համար ուսումնականութեան զէմ անկացութեամբ ուսնապատակ ուրիշ տար երու. որովհետեւ, ըսաւ, ուսումնական կառավարութեան տապալու-մովն է որ կողմաստայը իր ձեւերը

ազատ պիտի գտնէ իր տաճկահայ եղբայրներուն ազատութեան գործին օգտին: Գնահատելի բացատրութիւն:

Բանախօսը խօսքերը վերջացնելէ յետոյ, անոր խաղաղ հարցումներ ուղղուեցան ներկաներէն. 1) «Միտ - Շահէնը եւ Զիթեանը ինչո՞ւ սպաննել ատիք» հարցումին պատասխանը ուրաջու իրաւ. եւ կերպով մը՝ ալ չպիտի սպաննել ամենք ըսաւ: Բայց այդ ուրաջումին պատասխանելով, ի մէջ այլոց, Պ. Աւետիս Միլիտանեան չեղար, ըսաւ թէ, ձեր պատգամաւորը Պետրոս Գալֆու-եան որ այժմ հոս ներկայ է. Միտի սպաննուելէն վերջ ի ներկայութեան շատերու յայտարարած է թէ վերակազմեալ Հնչակեաններէն ով որ Ռուստոտան ոտք լոխէ Հին Հնչակեաններէն պիտի սպաննուի: Զեր պաշտօնական անձին այս յայտարարութիւնը կիթ չկրնամ հաստատել, եւ պատրաստ եմ կ'ազատեմ բարձրանալ, Գալֆուեան իր այս խօսքը ուրացաւ. Միլիտանեան պիտի ակնաշարել վերակազմ հաստատել. ուստի միտայն հաւանութեամբ որոշուեցաւ մասնախումբ մը կազմել եւ քննել Հին Հնչակ. պատգամաւոր Գալֆուեանի զէմ եղած այդ անբաստանութիւնը, յանցաւորին պատիմը անորին լու պայմանաւ, իր սպաննել:

2) Վերակազմեալի մը կողմէ «Միտ-թիւնը ինչո՞ւ քանդեցիք» հարցումին մը ի պատասխան, պ. Հրահատ կամար ըսաւ թէ, կեդրոնին մէջ երկու Հնչակ. հաստեմբները ներկայացնող անձերը զիրար չը կարողացան հասկնալ: Դիտողութիւն ընող չեղաւ թէ, եթէ զիրար չէին հասկնար, այդ պատարագային պարտաւոր էին, փոխանակ Հնչակով եւ չըջարեղականներով խըղումը յայտարարելու զիրար արտաքսելով, գաղափարական ժողովի մը հրաւէր կարգաւ երկու հաստեմբի մասնաճիւղերուն հաւասարապէս, որպէսզի այդ ժողովը զիրար հասկնող անգամներով նոր կեդրոն մը կազմել:

3) «Ինչու արտաքսեցիք 13 ծանօթ գործիչներ» հարցումին պ. Հրահատ միայն պատասխանեց թէ՛ ինք չէ կարող ուրիշ բացատրութիւն տալ բացի այն յայտարարութենէն որ Հնչակի այդ առաջին թիւին մէջ անհնուած է: Աւելորդ է ըսել թէ իր փառս հոն ցոյց տուած ամբաստանութեանց անհնիւ եւ չարամտորէն յերկրուած լինելն այսօր ազատացուած իրողութեանց կարգէն է:

4) Իրաւունքի խմբագրող հարցուց ատենախօսին թէ՛ դուք իրեն Հին Հնչակ. ներկայացուցիչ ինչ կարծիք ունիք հայ յիշատի. կուսակցութեանց մէջ միութեան կարեւորութեան մասին: Ատենախօսը միեւնոյն պատասխանել. առարկելով թէ այդ մասին խօսելու պատրաստուած չէ:

Հարցումը կրկնուեցաւ ըսելով թէ, մենք մանրամասն բացատրութիւններ չենք ուղեր, այլ կ'ը փոփոքինք հասկնալ թէ մեր ամէն կուսակցութիւնները միութեան պէտքին անհրաժեշտութիւնը խոստովանած ըլլալէ եւ երկար ամիսներ միմիայն հետ բանակցութեանց մտնելէ յետոյ, հիմակ դուք ինչ կը մտածէք միութեան կարեւորութեան վրայ. այսինքն միութիւն կընայ ըլլալ թէ ոչ, «այո՛ կամ ոչ», պատասխանելէ որ կուզենք: Ատենախօսը տատանուեցաւ. Ժողովուրդէն ուրիշ ձայն մը ըսաւ, « ուզած նիւթերուն վրայ երկար խօսեցաւ, երկու խօսք ալ Միութեան վրայ թող խօսի» Այս պնդումին վրայ ատենապետը յայտարարեց « Միտը չէ ուզում խօսիլ ինչու» էք ըսնանում վրան:

Հարցումը ուղղող խմբագիրը նկատել տուաւ թէ ատենախօսը քանի որ իբր ազգայինգործիչներկայանայ ժողովուրդը իրաւունք ունի պնդելու որ իր կարծիքը յայտնէ «ցանկալի միութեան» մասին: Վարչո հարկադրուեցաւ առաջարկել ատենախօսին թէ, եթէ այժմ չէք կարող այդ հարցումին պատասխանել, օր թող նշանակուի այն մասին խօսելու: Ատենախօսը «կը մտածեմ» ըսաւ:

Այս փախուստէն եւ բոլոր անորոշ պատասխաններէն այն համոզումը եկաւ ներկաներու վրայ թէ, Հին Հնչակ. ներկայացուցիչը Միութեան գաղափարին դեմ է: Ասկէ ալ գիւրին է հետեւեցնել թէ կազմուած միութեան քանդումն եւս անոնց այդ ներքին նպատակին արդիւնքն է, ոչ թէ խաչագողութիւն, ոչ թէ «նազըմակա-նութիւն» եւ ոչ գաղափարի գաւաճանութիւն. որոնցով հրապարակը լեցուցին, կարծելով թէ ժողովուրդը այդ ձրի գրպատութիւնները հալած իւրի պէս պիտի կլլէ: (Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ

Ողբացեալ Զիթեանի սպանութեան կսկիծին չը կարենալ սովալով իր կնոյ խենթեցած ըլլալը ասկէ առաջ գրած էինք: Աւերիկայէ ստացուած վերջին թերթերը այդ տարաբաղդ տիկնոյ արդի վիճակի մասին հետեւեալ տեղեկութիւնը կուտան.

«Հիւանդանոցի տեղութեանէն մեր ստացած վերջին տեղեկութիւնները գործողութեան կը հաստատեն թէ՛ Տիկ. Զիթեան սաստկապէս կը տառապի իր ուղեղային խանգարումի հիւանդութեամբ: Ետին ատիճան գերագրգռուած վիճակի մէջ: Մարդու հետ չի խօսիլ, իրեն այցելուները չի ճանչնար եւ ոչ ալ կուտ: Իրեն մտունդ կը մասակործարուի սրտեւտական խողովակի մըջացաւ միայն, իրեն արդիւնք այս հոգեհանգ վիճակին կը մասնացած եւ կեղբարեանափոխուած է տարաբախտ, հէգ կլինը:

Մեր նախորդ թիւով հաղորդածին համեմատ, Տիգրիսի բարեգործ. ընկերութեան ի նպատակ այդ քաղաքի մէջ եկեղեցական երգեցողութեան նուագահանդէս մը պիտի արուիվեհ. Հայրապետը իրեն ուղղուած հարցումին պատասխանելով թոյլատրած է: Բայց ամէն կողմ դժգոհութիւն կը յայտնուի եզեր եկեղեցական երգեցողութիւնները, մանաւանդ Պատարագի կոորները, թատերաբեմ հանուելուն: Երգողները 40 հոգիէ պիտի բաղկանան որոնց պիտի մասնակցին օրիորդներ ալ:

Բանասերի խմբագիրը Տիար Կ. Յ. Բամաճեան վերադարձած ըլլալով իր ուսումնասիրական ուղեւորութենէն, վերապաճ է իր հանդէսին հրատարակութիւնը:

Ստացանք Բանասերի օգոստ. սեպտ. ամիսներու թիւը, ուր կը խօսի Հայոց հին կրօնքներուն վրայ: Կարծէ որ ամէն հայ կարգայ այդ թիւը, որ որոշ գա-

ղափար մը կուտայ մեր ազգային հին պաշտամանց մասին:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. Յարութիւն Պատրիարքը հեռագրու իր հրաժարականը զրկած է Պոլսոյ Կեդր. Վարչութեան: Նորին Սրբազնութեան այս հրաժարման գլխաւոր պատճառը եղած է նորընտիր լուսարարապետ Տ. Վահրամ վ. Ազարեանի եւ Կա հաւանելուն առկա թիւ երեսաղեմայ միաբաններէն մէկ քանիններուն զանի դիմաւորել երթալը հակառակ Պատրիարքի կամքին: Այս հրաժարականին վրայ, Պոլսոյ Խառն Ժողովը հարկ դատած է փութացնել երկու քննիչներու առաքումը: Նշանակուած քննիչներն են Կրօն Ժողովոյ Գերաւորնապետ Տ. Վահրամ արքեպ. Մանգակունի եւ Գալ. Ժողովէն Տիգրան էֆ. Եւստեփեան: Կը սպասուի թէ այս երկու քննիչները իրենց բարձր գիրքով ու ներհոսն փորձառութեամբ կարող ըլլան կարգապահութիւնը վերահաստատել եւ վանքին երեւմտական վիճակին ապահով գրութիւն մը սահմանել:

Եւրոպայի հայ գաղթականութեանց առաջնորդ Տ. Գեորգ Եպիսկ. Պատրիարքին նամակ մը գրելով կրօն թէ Կովկասի եկեղեցապատկան կալուածներու դըրաւման գէմ Ռուսիոյ Զարին ուղղուած աղերսագիրը Ռորիզի հայ հարուստները ստորագրել գծկամակեցան եւ Լոնտոնի Ռուսահայ հարուստները աւելի զգուշութիւն ջատագովեցին, մինչ խնդիրը լոկ հոգեւորական էր: (Բայց Հին Հնչակեանները այդ խնդրոյն քաղաքական դոյն տուին իրենց օրկաններով: Գիւս. ԽՄԲ.) Տ. Գեորգ Եպիսկոպոս կաւելցնէ թէ ոչ Բարիզի եւ ոչ Լոնտոնի ուսու դեպուստները չընդունեցին այդ աղերսագիրը իրենց հասցէին մատուցանելու հոգը, ուստի հայի դատուեցաւ կրկնապէս ապահովագրելով զրկել ուղղակի Զարի հասցէին:

ԾԱՆՈԻ Ի ԳԻՐՔԵՐ

ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.

« Բ. » [433 էջ] 2 ֆր.

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՋ ՀՈԳԱԿՄԻՆ երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարեան նկար ու կայք ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութենէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅԻՆԵՐԻ ՁԱՅԻ Պատկեր մը ծածկահայտաւոր իրական կեանքէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար գիւրի վճարել « Իր աւուր » ի խմբագրութեան

